վան զի Լէնկթիմուրի արշաւանքի ժամանակ նա դեռ կանգուն էր, եւ նա անցաւ իր զօրքով նրա վրայով 1396 թուին, ու պաշարելով երնջակ բերդն, անցաւ Վրաստան: Շէրէֆ-Էդդինը, Լէնկթիմուրի արշաւանքի պատմիչը, աւանդել է մեզ այդ կամրջի նկարագրութիւնը:

"Կամուրջը հիմնած է տաշած ժայռի վրայ անխախտ ամրութեամբ, վերեւը զարմանալի հարթ եւ քարերը միացած են այնպէս կանոնաւոր եւ ամուր կերպով, որ ամենահնարագէտ ճարտարապետը պէտք է զարմանայ: Կամարներն այնքան բարձր եւ երկայն են, որ մինի հիմքերի սրունքը 60, միւսինը 50 պարսկական բազուկ է: Կամարի ստորին մասումը շինուած է քարվանասարայ, իսկ երկու ծայրումը դրուներ՝ զարմանալի գեղեցկութեամբ":

Այս պատմիչը կամրջին տալիս է "Եօղգայի կամուրջ" անունը: Ինչպէս երեւում է այդ խօսքերից, կամուրջն ունեցել է երկու աչք կամ կամար. այս ապացուցանւում է նոյնպէս եւ նոր պատմագիր՝ արքայազն Բէհմէն-Միրզայի հետեւեալ վկայութեամբ:

"Էմիր Թէյմուր Կարգանը (Լէնկթիմուր) 789 թուին հիջրէի (1387/8 փրկչ.) զօրքը քշելով եկաւ Ատրպատական եւ դիմեց դէպի Նախիջեւանի կողմն եւ անցնելով Մարանդից եւ Դարա-Դիզ ձորից, հասաւ Արազ գետին եւ նրա վրայի "Ջիւա-ուլ-Մուլք" կոչուած կամրջից իջաւ. եւ այդ կամուրջ է, որ տաշած քարից է շինած, եւ երկու մեծ ուղղային թաղ (կամար) ունի, որ նրա լայնութիւնը 60 դեազ է. եւ որովհետեւ նա մտքումն դրել էր առնել Ալինջաղը (Երնջակ) բերդն[1], որի մէջ ամրա-

---

1 Երնջակի ամրոցն կամ Երնջակաբերդը հաւանական է մեր պատմութեան մէջ Սմբատ Խոստովանող արքայի